ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2014 թվականի N 40-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի N144-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասով, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի 27.03.2014թ. N20/222 գրության, **որոշում եմ՝**

1. Հաստատել արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Սյունիքի մարզպետի 2012թվականի նոյեմբերի 7-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը հաստատելու մասին>> N144-Ա որոշումը:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2014թ. մարտի 28
ք. Կապան